№ 213 Դեկտեմբերի 6 (18) 1879 Դեկտեմբերի 6 (18) № 213

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Խմբագրում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք գրվում են այսպէս
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թւին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի գինը և պրոգրամմն նոյն են մնում։ Մենք սահմանում ենք ԱՂՔԱՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ‹ՄՇԱԿԻ› տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվան 6 րուբլ։ Դրամը կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է գրել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց լրագրութեան վիճակը.—Ներքին տեսութիւն. [illegible]—Արտաքին տեսութիւն. [illegible]—Յայտարարութիւններ—Բանասիրական. Հանգուցեալ [illegible]

ՀԱՅՈՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Հայոց լրագրի խմբագրին երբէ թէ միշտ վիճակված է իր գրպանից լրագրի հրատարակման պակասորդ տարեկան ծախսը ծածկել, միշտ դեֆիցիտ ունենալ և երբէք այնքան արդիւնք չ ստանալ իր թերթից, որ գրանով ծածկի թերթի հրատարակման տարեկան ծախսը։ Այդ եւ չենք խօսում արդիւնքի աւելորդի վրայ, որով կարելի լինէր բարւոքել լրագիրը, վարձել լաւ գրողներ, պահել թղթակիցներ եւրոպական մայրաքաղաքներում, Կ. Պոլսում և Հայաստանում... Այդ դրութեան հայոց լրագիրը հարիւր տարուց յետոյ էլ չի հասնի....

Այդ դեռ բաւական չէ։ Հայոց լրագրին գրիչներից շատերը իրանց պարտաւորութիւնը չեն համարում վճարել իրանց ստացած լրագրի բաժանորդագինն անգամ, այնպէս որ հայոց թերթը իւրաքանչիւր տարի անպատմելի կորուստներ ունի։

Բացի սորանից հայոց լրագրի կարդացողների թիւը միշտ երկու, երեք անգամ մեծ է լինում, քան թէ բաժանորդների թիւը։ Հայը նայում է հայոց թերթի վրա, ինչպէս մի մասնաւոր գործի վրա.... «Ի՞նչ չարչարվի խմբագիրը, ինձ ի՞նչ փոյթ, ասում է հայը, թող իր փողն էլ ամեն տարի լրագրի հրատարակութեան վրա դնի...—իսկ ես կամ մի կը կարդամ, կամ կը գրեմ և փող չեմ վճարի.... Ի՞նչ լրագիրը ոչնչանայ, ինձ ի՞նչ...»

Այսպիսի անտանելի հանգամանքներում հայերի մէջ լրագիր, մանաւանդ ամենօրեայ թերթ հրատարակելը, հերոսութիւն պէտք է համարել։

Հասարակութիւնը չէ ճանաչում լրագրին, կարծելով որ լրագիրը մի մասնաւոր մարդու կարիքը գործն է և ոչ թէ մի հասարակական անհրաժեշտ հիմնարկութիւն,—և այդ պատճառով լրագիրները հայերի մէջ կարող են պահպանվել միմիայն մասնաւոր անձանց ջանքով և նոյն իսկ խմբագրի նիւթական միջոցներով։ Եթէ խմբագիրը կամ հրատարակողը քիչ շատ ունեւոր մարդիկ չ լինէին, ոչ մի հայոց թերթ գոյութիւն չէր կարող ունենալ։

Այս հայի ինքնաճանաչութեան չափը իր կենսական ամենաանհրաժեշտ պահանջների մէջ....

Որովհետեւ հայերի մէջ լրագրի հրատարակիչը մի ժամանակաւոր, և ոչ թէ մի հաստատութեան գործ է, որովհետեւ հէնց որ խմբագիրը կամ հրատարակիչը, որոնց անձնաւորութեան ողնում էին իրանց դրամական միջոցներով լրագրի հրատարակութեանը, կը փախչեն,—լրագրի հրատարակութիւնը անպատմելի կը խափանվի....

Մեր լրագրութեան մէջ, որ ներկայացնում է միմիայն տխուր և անմխիթար կողմեր, որ խոստանում է մի շատ անմխիթար ապագայ,—կայ միայն մի մխիթարական կողմ, այն է մեր թղթակիցների և աշխատակիցների մեծ մասի անվարձ աշխատակցութիւնը։

Նոքա էլ իրանց ոյժերը նուիրում են ձրիաբար մեր մտաւոր լրագրութեան գործին, ինչպէս այդ անում են և իրանց խմբագիրները, համոզված լինելով թէ քանի որ մեր հասարակութիւնը անտարբեր է մնում դէպի ամեն մտաւոր շարժում, մեր լրագրութեան գործը պէտք ունի նոցանից օգնութեան։ Մեր թղթակիցներ համոզուած են, որ լրագրին թղթակցելը ներածում է լայնել հրապարակախօսական հասարակութեան անհրաժեշտ կարիքները, ուրեմն թղթակցութիւնները գործել են մի անհրաժեշտ պահանջ նոյն իսկ հասարակութեան խելքի մասի համար։

Դորա համար մենք շնորհակալութիւն ենք յայտնում մեր թղթակիցներին։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ [illegible]

[illegible]